



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք  
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,  
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,  
էլ. փոստ՝ [ashotsq.shirak@mta.gov.am](mailto:ashotsq.shirak@mta.gov.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2022 թվականի N 217 - Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԻԳԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ԱՂՈՒՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ԱՎԱԳ  
ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ, ՍԵՐՅՈԺԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԵՎ  
ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ,  
08-041-005-002-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Իգիթ Առաքելյանի դիմումը, **որոշում եմ.**

Քաղաքացիներ Իգիթ Առաքելյանին, Աղունիկ Առաքելյանին, Ավագ Առաքելյանին, Արմեն Առաքելյանին, Սերյոժա Առաքելյանին և Սուսաննա Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Թավշուտ, 4-րդ փողոց, բնակելի տուն 3, հասցեում գտնվող, 08-041-005-002-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2004 թվականի սեպտեմբերի 30-ին, վկայական N 1154525/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 4-րդ փողոց, բնակելի տուն 3:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



2022 թվականի նոյեմբերի 22  
գյուղ Աշոցք



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք  
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,  
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,  
էլ. փոստ՝ [ashotsq.shirak@mta.gov.am](mailto:ashotsq.shirak@mta.gov.am)

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2022 թվականի N 218-Ա

#### ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱԼՅՈՆԱ ԻՎԱՆ ԳՈՆՉԱՐՈՎԱՅԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՎԱՆ ԳՈՆՉԱՐՈՎԻ, ԳԱԼԻՆԱ ԻՎԱՆ ԳՈՆՉԱՐՈՎԻ ԵՎ ԴԱՎԻԹ ԻՎԱՆ ԳՈՆՉԱՐՈՎԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է Աշոցք համայնքի Մեծ Սեպասար բնակավայրի 1 փողոց 13 տուն հասցեում բնակվող անչափահաս երեխաներ՝ Ալյոնա, Հովհաննես, Գալինա և Դավիթ Իվան Գոնչարովների խնամքի և դաստիարակության, կյանքի և առողջության ապահովման նպատակով «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ տեղափոխելու հարցը:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պարզել է, որ 2022 թվականի մարտ ամսին երեխաների հայրը՝ Իվան Գոնչարովը, հեռացել է լքելով ընտանիքը, իր չորս մանկահասակ երեխաներին թողնելով երեխաների մոր՝ Կարինե Կակոսյանի խնամքին:

Գտնվելով սոցիալական և ֆինանսական վատ վիճակում մայրը շարունակում է աշխատել ֆերմայում, չկարողանալով զբաղվել անչափահաս երեխաների խնամքով և դաստիարակությամբ: Տունը որտեղ ապրում է ընտանիքը պատկանում է գործատուին, ապահովված չէ կենցաղային բավարար պայմաններով և գտնվում է հակասանիտարական վիճակում: Մոր անտարբերության պատճառով 2022 թվականի հոկտեմբերի 19-ին երեկոյան ուշ ժամի, տանը մենակ գտնվելով, երեխաները խառնել են վառարանի կրակը, որի հետևանքով հրդեհ է բռնկվել, երեխաները ծխահարվել են և տեղափոխվել Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոց, բարեբախտաբար նրանց կյանքին վտանգ չի սպառնացել: Ստանալով անհրաժեշտ բժշկական օգնություն երեխաները երեք օրից դուրս են գրվել հիվանդանոցից:

Ընտանիքի հետ աշխատել են համագործակցող տարբեր կառույցներ և պետական, և հասարակական: Կատարված աշխատանքների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Կարինե Կակոսյանի մոտ բացակայում են ծնողավարման և կենցաղավարման հմտությունները: Կազմակերպվել են համապատասխան